

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ	14
6.3. Վարկեր	15
6.4. Դրամական փոխանցումներ	17
7. ԱՄՓՈՓՈՒՄ	18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տնտեսական ակտիվության աճի տեմպը շարունակում է դանդաղել՝ պայմանավորված նախորդ ամիսներին բարձր տնտեսական աճ ապահովող ոսկերչական գործունեության կտրուկ անկմամբ: Հուլիսին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 6.2%՝ հունիսի նկատմամբ դանդաղելով 0.8 տոկոսային կետով՝ պայմանավորված գրեթե բոլոր ճյուղերում աճերի դանդաղմամբ: Հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ը կազմել է 9.6%՝ հունվար-հունիսի համեմատ դանդաղելով 0.8 տոկոսային կետով: Հաշվի առնելով նախորդ տարվա վերջին ոսկերչական գործունեության ակտիվացումը և դրա պատճառով խոշոր բազայի առկայությունը, կարող ենք սպասել, որ տնտեսական ակտիվության աճի տեմպը կշարունակի դանդաղել:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %¹



2024թ. հունվար-հուլիս ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և արդյունաբերության աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 9.1 և 3.4 տոկոսային կետ: Տնտեսական ակտիվության աճին փոքր դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար 1.0 և 0.8 տոկոսային կետով:


¹ Նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2024թ. հունվար-հուլիսին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն²

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը շարունակել է գտնվել բավական ցածր մակարդակում: Ոսկերչական գործունեության անկումից հետո արդյունաբերության աճի տեմպն էապես նվազել է՝ հունիս և հուլիս ամիսներին հասնելով 1.3% և 2.2%-ի: Ընդ որում, նման ցածր աճի տեմպեր գրանցվում են նախորդ տարվա անկման համեմատ: Այսինքն՝ նախորդ տարի նույն ամիսներին արդյունաբերությունը անկում էր ապրում, իսկ այս տարի գրեթե չի վերականգնվում: Հունվար-հուլիս ամիսներին արդյունաբերության աճը կազմել է

² Արդյունաբերության աճի նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

15.7%՝ նախորդ ամսվա նկատմամբ դանդաղելով 2.5 տոկոսային կետով: Տարեվերջին արդյունաբերության աճի տեմպերը զգալիորեն ավելի ցածր կլինեն:

Արդյունաբերության հունվար-հունիս³ ամիսների աճը դեռևս պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով, որը, սակայն, կտրուկ դանդաղում է: Հունվար-հունիսին մշակող արդյունաբերությունն աճել է 27.7%-ով (հունվար-մայիսի աճը՝ 33.7%)՝ ընդհանուր արդյունաբերության աճին նպաստելով 18.2 տոկոսային կետով (հունվար-մայիսի նպաստումը՝ 21.7%): Մշակող արդյունաբերության աճն իր հերթին շարունակում է պայմանավորված մնալ «հիմնային մետաղների արտադրություն» գործունեության տեսակի շուրջ 3.8 անգամ աճով, որը սակայն դանդաղում է՝ շարունակաբար ավելի քիչ նպաստում ունենալով ընդհանուր արդյունաբերությանը (հունվար-հունիսի նպաստումը կազմել է 17.8 տոկոսային կետ):

Մշակող արդյունաբերության աճին դրական նպաստում ունեցող ենթաճյուղերից կարելի է առանձնացնել նաև «էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» և «կահույքի արտադրություն» ենթաճյուղերը, որոնց նպաստումները մշակող արդյունաբերությանը կազմել են ընդամենը 1.67 տոկոսային կետ:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության ոլորտի խնդիրները պահպանվում են, մասնավորապես անկում են ապրում այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն», «սննդամթերքի արտադրություն», «քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն», «պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում», «հագուստի արտադրություն», «խմիչքի արտադրություն», «մեքենաների և սարքավորանքի արտադրություն՝ չներառված ուրիշ խմբավորումներում» և այլ ենթաճյուղեր՝ մշակող արդյունաբերության աճին հակազդելով 2.4 տոկոսային կետով:

Ընդհանուր առմամբ, առանց «հիմնական մետաղների արտադրություն» ապրանքախմբի, արդյունաբերության ոլորտի աճը հունվար-հունիսին 18.2%-ի փոխարեն կազմում է 0.4%:


Հանքարդյունաբերության ոլորտում շարունակվում է անկման տեմպերի խորացումը: Հունվար-հունիսին անկումը կազմել է 9.2%՝ հունվար-մայիսի 8.8%-ի դիմաց: Ընդհանուր արդյունաբերության աճին հանքարդյունաբերության անկումը հակազդել է 1.8 տոկոսային կետով:

³ Արդյունաբերության հուլիս ամսվա տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 13.0% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 1.8 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 5.3% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը նույնպես սկսել է դանդաղել: 2024թ. հուլիսին շինարարության աճը կազմել է 17.7%՝ հունիսի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով, իսկ հունվար-հուլիս ամիսների աճը՝ 16.1%՝ արագանալով 0.4 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով, սակայն հատկանշական է, որ սկսել են աճել բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալները, այն դեպքում, երբ նախկինում աճը տեղի էր ունենում հիմնականում կազմակերպությունների միջոցների հաշվին:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճի տեմպը հունիսի որոշակի արագացումից հետո, նորից դանդաղել է: 2024թ. հուլիսին ծառայությունների ոլորտի աճը կազմել է 4.9%՝ շուրջ 2.9 տոկոսային կետով ցածր լինելով նախորդ ամսվա ցուցանիշից: Արդյունքում ծառայությունների աճը հունվար-հուլիսին փոքր-ինչ արագացել է՝ 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 4.5%:

Ըստ հունվար-հունիս⁴ ամիսների տվյալների՝ ծառայությունների աճը շարունակում է պայմանավորված լինել ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտով, որի աճը կազմել է 19.0%, իսկ նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին՝ 5.1 տոկոսային կետ: Ծառայության մյուս տեսակները նույնպես աճել են և դրական նպաստում են ունեցել ոլորտի աճին, բացի տրանսպորտային ծառայություններից և տեղեկատվության և կապի ոլորտից, որոնք նվազել են համապատասխանաբար 16.8%-ով և 8.3%-ով՝ ընդհանուր ծառայությունների աճին հակազդելով 2.2 և 1.8 տոկոսային կետով:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %




Առևտրի աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է: Առևտրի ոլորտում հուլիսին գրանցվել է 14.0% աճ, որը 2.2 տոկոսային կետով ցածր է նախորդ ամսվա ցուցանիշից, ինչպես նաև էականորեն ցածր է նախորդ տարվա նույն ամսվա աճից: Առևտրի նախորդ տարվա վերջի աճը և ընթացիկ տարվա կտրուկ դանդաղումը վկայում է այն մասին, որ այս ոլորտում արտացոլվում են ոսկու վերաարտահանման հետ կապված գործարքները, հետևաբար աճի տեմպի դանդաղում կնկատվի նաև հաջորդ ամիսներին:

⁴ Ծառայությունների ոլորտի՝ ըստ ենթաոլորտների, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճը շարունակել է մնալ տարեսկզբի ամիսների համեմատ էականորեն ավելի ցածր մակարդակում: 2024թ. հուլիսին արտահանման աճը կազմել է 42.8%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 17.9 տոկոսային կետով: Հունվար-հուլիս ամիսների արտահանման ծավալների աճը նույնպես դանդաղել է՝ կազմելով 121.3% (2.2 անգամ):


2024թ. հունվար-հունիս⁶ ամիսների ընթացքում արտահանման աճը գրեթե ամբողջությամբ ապահովվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալի շուրջ 8.1 անգամ աճի հաշվին: Վերջինիս նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 146.4 տոկոսային կետ: Արտահանման կառուցվածքում աճեր են գրանցվել նաև «հանքահումքային արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի գծով, որոնց ընդհանուր նպաստումն արտահանման աճին եղել է բավական փոքր՝ 2.7 տոկոսային կետ: Մնացած բոլոր ապրանքախմբերի գծով գրանցվել է կա՛մ զրոյական աճ, կա՛մ անկում:

Առանց վերը նշված «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի (ըստ էության՝ ոսկու վերաարտահանման) ընդհանուր արտահանումն անկում է ապրել 11.9%-ով: Սա բավական մտահոգիչ է և ցույց է տալիս, որ տնտեսության արտահանելի հատվածում տեղի է ունեցել ներուժի կորուստ:

⁵ Արտահանման և ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

⁶ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման աճի տեմպը և էականորեն նվազել է: Ներմուծման աճի տեմպը 2024թ. հուլիսին կազմել է 30.7%՝ էականորեն ցածր լինելով տարեսկզբի ցուցանիշներից: Սա կապված է մի կողմից՝ ոսկերչական ապրանքների վերաարտահանման ծավալների նվազման, մյուս կողմից՝ այլ ապրանքախմբերի գծով ներմուծման նվազմամբ կամ ցածր աճերով:

2024թ. հունվար-հունիս ամիսների⁷ տվյալներով ներմուծման աճը, արտահանման նման, առավելապես պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի շուրջ 9.4 անգամ աճով, ինչն ընդհանուր ներմուծման աճին նպաստել է 96.3 տոկոսային կետով:


Ներմուծման կառուցվածքում պատկերը նույնպես մտահոգիչ է: Դրական նպաստող են եղել «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերը, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 21.6% և 7.8%, իսկ նպաստումները ներմուծման աճին՝ ընդամենը 1.2 և 0.4 տոկոսային կետ: Ներմուծման մյուս ապրանքախմբերի գծով նպաստումները կա՛մ զրոյական են, կա՛մ բացասական: Սա էլ իր հերթին վկայում է ներքին թույլ պահանջարկի մասին:

⁷ Արտաքին առևտրի՝ ըստ ապրանքատեսակների, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁸

Աշխատավարձի աճը շարունակում է դանդաղել: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2024 թվականի հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 6.8%-ով (հունվար-մայիսի համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով)⁹՝ կազմելով 279,023 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.6%-ով (հունվար-մայիսի համեմատ դանդաղել է 0.7 տոկոսային կետով)⁹՝ կազմելով 306,316 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է 211,319 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 10.0%-ով:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2023-2024թթ. հունվար-հունիսին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամի փոխարժեքը վերջին ամիսներին բավական կայուն է մնացել: Դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ մայիս-հուլիս ամիսներին մնացել է կայուն՝ միջինում 388 դրամի մակարդակում: Այդ պայմաններում, ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ արժեզրկված է եղել ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ՝ համապատասխանաբար 1.4% և 1.1%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում եղել է արժևորված՝ շուրջ 13.4%-ով: Ընդ որում, ՀՀ ապրանքների՝ արտաքին շուկաներում գնային


մրցունակության համար առավել կարևոր է ՌԴ ռուբլու նկատմամբ փոխարժեքը, որն արդեն բավական երկար ժամանակ գտնվում է գերարժևորված դիրքում: Դրա բացասական հետևանքներն արդեն իսկ տեսանելի են արտահանման ցուցանիշներում:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁹

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը շարունակում է պահպանվել ցածր մակարդակում: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2024թ. հունվար-հուլիսին կազմել են 1,437.3 մլրդ դրամ՝ աճելով 4.9%-ով, որը հունվար-հունիսի համեմատ ցածր է 0.1 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկային եկամուտների աճը հունվար-հուլիսին կազմել է 5.5%՝ հունվար-հունիսի նկատմամբ արագանալով 0.2 տոկոսային կետով: Ոչ հարկային եկամուտների գծով գրանցվել է 5.4% նվազում, իսկ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 18.8%-ով:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճը 2024թ. հունվար-հուլիսին հիմնականում պայմանավորված է եղել եկամտային հարկի (աճը՝ 8.7%), բնապահպանական և բնօգտագործման վճարների (աճը՝ շուրջ 2.0 անգամ) և շահութահարկի (աճը՝ 4.2%) աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 2.3, 2.1 և 0.8 տոկոսային կետ:

⁹ ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող տվյալների հիման վրա: Ընդ որում, սկսած 2024թ. հունիսից, 2023-ի և նախորդ տարիների ցուցանիշները հրապարակվում են հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձները ընդհանուր ցուցանիշներում ներառված, ինչի հետևանքով սույն տեղեկանքում պետական բյուջեի ցուցանիշների աճերը տարբերվում են նախորդ ամիսներին հրապարակված տեղեկանքների ցուցանիշներից:


ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով մուտքերը հունվար-հուլիս ամիսներին նվազել են համապատասխանաբար 4.2% և 6.6%՝ ընդհանուր հարկային եկամուտներին հակազդելով 1.3 և 0.4 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2023թ. հունվար-հուլիս		2024թ. հունվար- հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	17.1	17.1	5.5	5.5
Ավելացված արժեքի հարկ	20.4	6.2	-4.2	-1.3
Ակցիզային հարկ	14.9	0.8	-6.6	-0.4
Շահութահարկ	45.4	6.9	4.2	0.8
Պետական տուրք	-51.4	-3.2	22.4	0.6
Մաքսատուրք	28.4	0.8	2.2	0.1
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-54.9	-2.8	104.0	2.1
Այլ հարկեր	43.6	1.2	8.9	0.3
Շրջանառության հարկ	30.7	0.8	16.3	0.4
Եկամտային հարկ	19.1	5.0	8.7	2.3
Սոցիալական վճարումներ	45.4	1.4	15.5	0.6

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը, ի տարբերություն եկամուտների, բավական բարձր է: Ընդհանուր ծախսերը 2024թ. հունվար-հուլիս ամիսներին կազմել են 1,495.3 մլրդ դրամ՝ աճելով 17.4%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը եղել է նույնը): Ընթացիկ ծախսերի աճը կազմել է 14.6%՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 12.9 տոկոսային կետով: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների աճի տեմպը ևս բավական բարձր է եղել՝ կազմելով 38.6% և ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 4.5 տոկոսային կետով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Ծախսերի բարձր աճի հաշվին պետական բյուջեն եղել է պակասուրդային: 2024թ. հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է շուրջ 58.0 մլրդ դրամի չափով պակասուրդ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն հավելուրդային էր:


5.4. Պետական պարտք

2024թ. հուլիսին ՀՀ պետական պարտքի անվանական ծավալը շարունակում է աճել ներքին պարտքի հաշվին: Պետական պարտքի ծավալը (արտահայտված ԱՄՆ դոլարով) հուլիսի վերջի դրությամբ կազմել է 12.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հուլիսի համեմատ աճելով 8.7%-ով: Կառավարության պարտքի ծավալը նույն ժամանակահատվածում կազմել է 11.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ աճելով 9.4%-ով:

Պարտքի աճը տեղի է ունեցել ներքին պարտքի (արտահայտված ՀՀ դրամով)՝ շուրջ 30.3% աճով, մինչդեռ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով) շարունակել է նվազել՝ շուրջ 6.0%-ով: Արդյունքում հուլիսի վերջի դրությամբ ներքին պարտքի կշիռն ընդհանուր պարտքի կառուցվածքում աճել է՝ կազմելով 51.4%:

2024թ. հուլիսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: Դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազմանը զուգահեռ նվազում է նաև պետական պարտատոմսերի միջին տոկոսադրույքը (եկամտաբերությունը): Նվազման չափը կարճաժամկետ պարտատոմսերի դեպքում հուլիսին՝ հունիսի նկատմամբ կազմել է 0.1 տոկոսային կետ, իսկ նախորդ տարվա հուլիսի համեմատ նվազումը կազմել է 2.2 տոկոսային կետ:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը աստիճանաբար արագանում է: 2024թ. սկզբից գնաճը գտնվում էր բացասական տիրույթում, սակայն մայիսից այն տեղափոխվել է

դրական տիրույթ և շարունակում է արագանալ: Հուլիսին գնաճը կազմել է 1.4%՝ հունիսի համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով՝ պայմանավորված «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի գների անկման տեմպի մեղմմամբ:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների ծավալի աճի տեմպը գտնվում է նախորդ տարվանից ցածր մակարդակում: Ընդհանուր ավանդների աճը 2024 թ. հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 12.5%, իսկ 2023 թ. դեկտեմբերի համեմատ որոշակիորեն արագացել է՝ կազմելով 3.8%՝ նախորդ ամսվա 2.1%-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ավանդների ծավալի աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, որոնք կազմել են համապատասխանաբար 12.9% և 11.4%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին 2024թ. հուլիսին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 6.1 տոկոսային կետով: Էական են եղել նաև ձեռնարկություններից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերը՝ կազմելով շուրջ 13.9% և 11.4%՝ ընդհանուր ավանդների աճին նպաստելով համապատասխանաբար 3.0 և 2.8 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի աճի տեմպը պահպանվում է բարձր մակարդակում: 2024թ. հուլիսին ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 18.9%-ով: 2023թ. դեկտեմբերի համեմատ վարկերի ծավալը նույնպես աճել է, սակայն ավելի փոքր տեմպով՝ շուրջ 8.3%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը տեղի է ունեցել հիմնականում ռեզիդենտներին տրամադրված վարկերի հաշվին, որոնք աճել են շուրջ 19.9%-ով և ընդհանուր վարկերի աճին նպաստել են 18.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է եղել և՛ տնային տնտեսություններին, և՛ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնք կազմել են համապատասխանաբար 20.6% և 19.3%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով համապատասխանաբար 10.3 և 9.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ¹⁰




¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

Հուլիսին վարկերի աճին զգալի նպաստում է ունեցել սպառողական վարկերի աճը (21.6%), որը կազմել է 4.8 տոկոսային կետ՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով: Հիպոթեքային վարկերի աճի տեմպը կրկին արագացել է՝ կազմելով 25.6%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.6 տոկոսային կետով, և ընդհանուր վարկերի աճին ունեցել է 5.4 տոկոսային կետով նպաստում: Տնտեսությանն ուղղվող վարկերի ծավալներն աճում են գրեթե բոլոր ճյուղերում, բացի արդյունաբերությունից:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը շարունակում է նվազել բարձր տեմպերով: 2024թ. հունվար-հունիս ամիսներին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 595.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ նվազելով 33.7%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ներհոսքի շուրջ 13.7%-ով նվազմամբ:

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2024թ. հուլիս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. ՀՀ տնտեսական ակտիվության աճն աստիճանաբար դանդաղում է, քանի որ դրա բարձր տեմպերն ընթացիկ տարում ապահովվում էին հիմնականում ոսկերչական ապրանքների վերաարտահանման գործունեությամբ, որի ծավալները կտրուկ նվազել են: Տնտեսության մյուս ճյուղերում նույնպես նկատվում է աճի տեմպի դանդաղում, ինչը հուշում է, որ մինչև տարեվերջ ՏԱՑ-ը կշարունակի ունենալ դանդաղման միտում:

2. Արտահանման ցուցանիշները նույնպես մտահոգության տեղիք են տալիս: Առանց վերը նշված ոսկերչական գործունեության («թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի) ընդհանուր արտահանումն անկում է ապրել 11.9%-ով: Սա վկայում է այն մասին, որ վերջին տարիների շուկերի արդյունքում գրանցված բարձր աճերը քողարկել են տնտեսությունում առկա խորքային խնդիրների զարգացումը, մասնավորապես՝ արտահանելի հատվածում ներուժի կորուստը:

3. Պետական բյուջեի ցուցանիշները ևս վատթարանում են: Պետական բյուջեն հունվար-հուլիս ամիսներին եղել է պակասուրդային, ընդ որում պակասուրդի չափը կազմել է 58.0 մլրդ դրամ, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեն եղել է հավելուրդային: Սակայն խնդիրը ոչ այնքան պակասուրդի ձևավորումն է (քանի որ պետական բյուջեի պլանով նախատեսված է ունենալ պակասուրդ), այլ այն, որ բյուջեի ծախսերի աճը էականորեն գերազանցում է հարկային եկամուտների աճին: Նման աճերի շարունակությունը կհանգեցնի տարեվերջին պլանավորվածից էապես ավելի մեծ պակասուրդի ձևավորմանը:

4. Վարկերի աճի տեմպը և կառուցվածքը նույնպես արժանի են ուշադրության: 2024թ. բանկերը հիմնականում իրենց ակտիվներն ուղղում են սպառողական և հիպոթեքային վարկավորմանը, ինչը բնականաբար մտահոգիչ է ներկա տնտեսական զարգացումների պայմաններում, քանի որ այդ վարկերի ծավալներն աճում են շատ ավելի արագ, քան տնտեսական աճը, աշխատավարձերի աճը, դրամական փոխանցումների աճը և այլն: Ավելին, արդյունաբերության ոլորտում վարկերի ծավալները նվազում են, ինչը խոսում է տնտեսական ներուժի վերականգնման համար քայլերի բացակայության մասին: Այս ամենը հաշվի առնելով՝ տնային տնտեսությունների պարտքային պարտավորությունների աճը կարող է միջնաժամկետում էական խնդիրներ առաջացնել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: